



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
«**ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐ**»

Ա. ՄԻՆԱՍՅԱՆ
Ա. ՄԻՆԱՍՅԱՆ

«21» 07 2017թ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 65

Ձեռնարկողը՝

«*Դիլիջան*» հանրային ջրի գործարան» ՍՊԸ
«*Տավուշի մարզ, ք. Դիլիջան, Արուլյան 25*»

Գործունեությունը՝

**Դիլիջանի ածխաթթվային հանքային ջրի հանքավայրի
թիվ 2/54 (1K) հորատանցքի արդյունահանման
շրջակա միջավայրի վրա ազդեցության
գնահատման հաշվետվություն**
«*Տավուշի մարզ*»

«*Շրջակա միջավայրի վրա
փորձաքննական կենտրոն*»
տնօրեն՝



Վ. Սահակյան

Վ. Սահակյան

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

թիվ ԲՓ 65

«21» 07 2017թ.

ՀՀ Տավուշի մարզի Դիլիջանի ածխաթթվային հանքային ջրի հանքավայրի թիվ 2/54 (1K) հորատանցքի արդյունահանման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն

Ձեռնարկող՝	«Դիլիջան» հանքային ջրի գործարան» ՍՊԸ
Ներկայացված նյութեր՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն /ՇՄԱԳ/ և կից փաստաթղթեր
Գործունեության կատեգորիա՝	«Ա»
Տեղադրման վայրը՝	ՀՀ Տավուշի մարզ

Դիլիջանի ածխաթթվային հանքային ջրի հանքավայրը գտնվում է Երևան քաղաքից 100կմ դեպի հյուսիս-արևելք, ՀՀ Տավուշի մարզի Իջևանի տարածաշրջանում՝ Դիլիջան քաղաքից 7կմ դեպի հյուսիս-արևմուտք:

Հանքավայրի տարածքում է գտնվում Դիլիջանի հանքային ջրերի գործարանը:

Հանքավայրի հիպոտեթիկ բացարձակ նիշերը տատանվում են 1410-1425մ սահմաններում:

Աղստև գետի ավազանի ռելիեֆի բազմազանությամբ է բացատրվում ստորերկրյա ջրերի սնման, տեղափոխման և բեռնաթափման պայմանների տարատեսակությունը:


Տարածաշրջանի հիմնական ջրային զարկերակը Աղստև գետն է՝ իր վտակներով: Գետի միջին տարեկան հոսքը կազմում է 256.0 մլն.մ³: Այն սկիզբ է առնում Լոռվա մարզի սահմանագծում՝ Փամբակի լեռնաշղթայի Թեժ լեռ լեռնագագաթի հյուսիս-արևմտյան լեռնալանջերից (2980 մ) և թափվում է Քոռո գետի մեջ: Գետի ընդհանուր երկարությունը կազմում է 133 կմ: Գետի ընդհանուր ջրհավաք ավազանը կազմում է 2889 կմ²:

Տարածքում շատ են նաև հանքային ջրերը, որոնցից իր արդյունաբերական նշանակությամբ աչքի է ընկնում Դիլիջանի ածխաթթվային հանքային ջուրը: Այն ՀՀ ամենաարժեքավոր ջրերից մեկն է և պատկանում է սեղանի բուժիչ-խմելու ջրերի տիպին և կարելի է հաջողությամբ օգտագործել շշալցման և բուժման նպատակով:

Հիշատակման է արժանի նաև <Ֆրոլովա Բալկա> հանքավայրի հանքային ջուրը, որը նույնպես ունի արդյունաբերական նշանակություն:

Դիլիջանի ածխաթթվային հանքային ջրի հանքավայրի շահագործողական պաշարները հաշվարկվել և հաստատվել են թիվ 2/54 (1K) հորատանցքով 2000 թ. մարտի 3-ին Հայաստանի Հանրապետության օգտակար հանածոների Պաշարների Պետական Հանձնաժողովի (ՀՀ ՊՊՀ)

Արսույան ՄԱԿ ՎԵՐԵՍԿ



կողմից (արձանագրություն թիվ 69) 01.10.1999թ.-ի դրությամբ և կարող են օգտագործվել շաղցման և բուժման համար:

Թիվ 2/54 (1K) հորատանցքով հաշվարկված հանքային ջրի պաշարը կազմում է՝ 0.8 լ/վրկ կամ 69.12 մ³/օր, ըստ B կարգի.

Հանքավայրի հիմնական ջրատար արդյունաբերական գոտին, որի հանքային ջրերը բավարարում են կոնդիցիայի պահանջներին հայտնաբերվել են 38.0-40.0մ միջակայքում: Ջրապարունակող ապարները ներկայացված են խիստ ճեղքավորված, հիդրոթերմալ փոփոխված պորֆիրիտներով:

Հանքավայրի հորատանցքը շատրվանում է հիմնականում գազլիֆտի հաշվին:

Հանքային ջրերի քիմիական կազմի ձևավորումը տեղի է ունենում տեկտոնական խախտման գոտիով վերընթաց հանքային ջրերի հոսքերի և խորասուզվող քաղցրահամ ջրերի խառնվելու արդյունքում:

Դիլիջանի հանքավայրի հանքային ջուրը համարվում է սառը (11.5-12.0°C), սիլիկատային (H₂SiO₃-81.0-130.0 մգ/լ), ածխաթթվային (CO₂-99.4 %), թույլ հանքայնացմամբ (3,7-4.0 գ/լ), թույլ թթվային (pH-6.6): Ըստ քիմիական կազմի՝ հիդրոկարբոնատ-նատրիումային է: Լուծված CO₂ գազի պարունակությունը կազմում է 1.9գ/լ:

Սպեցիֆիկ միկրոկոմպոնենտների չնչին քանակի պարունակությունը չի գերազանցում թույլատրելի սահմանները: Հանքային ջրի մանրէաբանական կազմը բարվոր է:

Հանքավայրի հանքային ջուրը քիմիական կազմով և առանձնահատկություններով հանդիսանում է <Բորժոմի> հանքային ջրի սառը նմանակումը:


Թիվ 2/54 (1K) հորատանցքը գտնվում է Բլդան գետի աջ ափին, 2.0մ հունից դեպի արևմուտք:

Ներկայումս հանքավայրը շահագործվում է <Դիլիջան> հանքային ջրի գործարան ՍՊ ընկերության կողմից համաձայն ՀՀ բնապահպանության նախարարության կողմից 08.08.2005թ. տրամադրված ստորերկրյա ջրերի հանքարդյունահանման թիվ 17 լիցենզիայի և կնքված թիվ 011 պայմանագրի, հետագայում այն ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարության կողմից 10.10.2012թ. վերաձևակերպվել է (օգտակար հանածոյի արդյունահանման թույլտվություն ՇԱԹՎ-29/124 և թիվ ՊՎ-124 պայմանագիր), որի գործողության ժամկետն ավարտվում է 2017թ.-ի օգոստոսի 7-ին:

Ջրհավաք թիվ 2/54 (1-K) հորատանցքի նոր շահագործման տևողությունը կկազմի 50 տարի: Ընկերության կողմից պահանջվող ջրաքանակը մնում է նույնը՝ 0.8 լ/վրկ կամ 25200.0 մ³/տարի:

Ընդերքի, ջրային ռեսուրսների, շրջակա միջավայրի որակի պահպանման և բնակչության էկոլոգիական անվտանգության ապահովման նպատակով, ինչպես նաև հանքավայրի թիվ 2/54 (1-K) հորատանցքի հանքային ջրի արդյունավետ և պատշաճ շահագործման համար <Դիլիջան> հանքային ջրի գործարան ՍՊ ընկերությունը կատարել է ներքոհիշյալ աշխատանքները

1. Թիվ 2/54 (1-K) հորատանցքը կահավորել է վերերկրյա կառույցով և իրականացրել է հորատանցքի բերանի շուրջ ֆունդամենտի հուսալի հիդրոիզոլյացիա:
2. Գարնանային սելավների ավերիչ գործունեությունից խուսափելու համար, իրականացրել է հակասելավային միջոցառումներ՝ կառուցել է բետոնյա պատնեշ:
3. Ջրհավաք թիվ 2/54 (1-K) հորատանցքի զլխամասը սահմանված կարգով կահավորել է համապատասխան սարքավորումներով՝ փականներ, չափիչ սարքեր, կապարակնքված ջրաչափեր, գազանջատիչ: Սույն աշխատանքներն իրականացվել են ՀՀ կառավարության 22 հունվարի 2009 թվականի N 97-Ն <Ստորերկրյա հանքային ջրերի արդյունահանված պաշարների և արտադրված ածխաթթու գազի հաշվառման, հաշվիչ (չափիչ) սարքերի տեղադրման ու կնքման կարգը, ստորերկրյա հանքային ջրերի արդյունահանված



պաշարների և արտադրված ածխաթթու գազի ծավալների վերաբերյալ տվյալների արձանագրման կարգն ու ժամկետները հաստատելու մասին> որոշման պահանջներին համապատասխան:

4. Ջրհավաք հորատանցքը ամրակապել է 2 դույնանոց հակակոռոզիոն (խմելու որակի) խողովակաշարով:
5. Ջրհավաք թիվ 2/54 (1-K) հորատանցքը կառուցապատել է սանիտարական պահպանության առաջին (խիստ ռեժիմի) գոտիով:
6. Իրականացրել է հիդրոերկրաբանական ռեժիմային ստացիոնար մշտադիտարկումներ (մոնիտորինգ):
7. Նախկին հանքային ջրի շշալցման գործարանը հիմնովին վերանորոգել է, կառուցել է քիմիական լաբորատորիա, նոր արտադրամաս, տարողունակ պահեստներ և այլն:
8. Ձեռք է բերել և գործարանի շշալցման արտադրամասում տեղադրել է հանքային ջրի շշալցման հոսքագիծ կահավորված ժամանակակից արտադրական սարքավորումներով և տեխնիկայով:


<Դիլիջան> հանքային ջրի գործարան ՍՊ ընկերության կողմից ներքոհիշյալ աշխատանքների կատարման համար՝ ներդրվել է ավելի քան 2 680 000 000 ՀՀ դրամ:

Ընկերությունը երկարաձգելով հանքային ջրի հանքավայրի արդյունահանման թույլտվության գործողության ժամկետը՝ արդյունաբերական (շշալցման) համար և իրականացնելով այն կշարունակի ապահովել շուկայի պահանջարկը, ինչպես նաև կպահպանի մի քանի տասնյակ աշխատատեղեր, որն իր հերթին կնպաստի սահմանամերձ Տավուշի մարզի բնակչության սոցիալական պայմանների և կենսամակարդակի բարելավմանը:

Ջրհավաք հորատանցքի արդյունավետ շահագործման հիմնական պահանջները հետևյալն են՝

1. Հանքային ջրի հանքավայրի արդյունավետ և երկարաժամկետ շահագործումը հնարավոր է իրականացնել միայն հորատանցքի լավ տեխնիկական վիճակի, նրանց գլխամասային սարքավորումների, չափիչ սարքերի, ինչպես նաև սանիտարական գոտիների առկայության և պատշաճ վիճակում պահելու պայմաններում:
2. Ածխաթթվային հանքային ջրի հանքավայրի արդյունաբերական շահագործումը պետք է իրականացնել հատուկ ջրհավաք (կապտաժային) հորատանցքից կահավորված հակակոռոզիոն (խմելու որակի) խողովակաշարով: Շահագործման ժամանակ չի թույլատրվում շահագործվող ջրհավաք հորատանցքից ՀՀ ՊՊՀ-ի կողմից հաստատված պաշարների չափից ավելի արդյունահանումը:
3. Ածխաթթվային հանքային ջրի հանքավայրի հորատանցքի շահագործումը պետք է իրականացվի հիդրոերկրաբանական պայմաններին, հանքային ջրերի հաստատված պաշարների քանակին, նրանց քիմիական կազմին, ջերմաստիճանին և ռեժիմին խիստ համապատասխան:
4. Ջրհավաք հորատանցքի շահագործումը և հանքային ջրի ռեժիմի հսկողությունն իր մեջ ներառում է հանքային ջրերի քանակի և որակի նկարագիրը, նրա երկարատև շահագործման պայմաններում, ինչպես նաև հորատանցքի պահպանումը՝ սպառումից, աղտոտումից և աղակալումից:
5. Հանքային ջրերի շահագործման ժամանակ անհրաժեշտ է ջրերի կոնդիցիոն քիմիական կազմի պահպանումը:

Ջրհավաք հորատանցքը իր գլխամասային սարքավորումներով պետք է ներառվի սանիտարական պահպանության առաջին (խիստ ռեժիմի) գոտիով, որը բացատրվում է հանքային ջրերի հիդրոդինամիկայի առանձնահատկություններով:



Կողմնակի անձանց մուտքը սանիտարական պահպանության առաջին (խիստ ռեժիմի) գոտի խստիվ արգելվում է:

Հանքային ջրերի պաշարները վերականգնման առանձնահատկություն ունեն և շահագործման ընթացքում պահանջում են զուգահեռաբար իրականացնել ջրերի որակի, քանակի, վիճակի և շահագործման ռեժիմի նկատմամբ ուսումնասիրություններ, որը կապահովի գերծ պահել ջրերը աղտոտումից, սպառումից և տեխնածին գործընթացների վնասակար ազդեցությունից:

Հանքավայրում համաձայն ՀՀ կառավարության 22 նոյեմբերի 2012թ. 1480 – Ն որոշման հավելվածի, սահմանված կարգով, կշարունակվեն իրականացվել մշտադիտարկումներ (մոնիտորինգ) ջրի ծախսի, մակարդակի և ջերմաստիճանի չափումներ, ինչպես նաև կկատարվեն ջրի նմուշարկումներ՝ համապատասխան լաբորատոր հետազոտություններ իրականացնելու համար:

Ելնելով հանքավայրի հիդրոերկրաբանական պայմաններից և գործող մեթոդական ցուցումներից՝ ջրի ծախսի, մակարդակի և ջերմաստիճանի չափումները կկատարվեն 10 օրը մեկ:

Ջրի նմուշները քիմիական լաբորատորիայում ենթարկվելու են կրճատ քիմիական անալիզի, որտեղ որոշվելու են – (Na+K), NH₄, Ca, Mg, Fe, Cl, SO₄, NO₂, NO₃, CO₃, HCO₃, SiO₂, H₂S, կոշտությունը, հանքայնացումը, չոր նստվածքը, թթվայնությունը, ջրի ֆիզիկական հատկությունները և այլն:

Ստացված արդյունքները հնարավորություն կնձեռնեն գնահատելու հանքավայրում տեղի ունեցող քանակական և որակական փոփոխությունները:

Արդյունքում կկազմվի հաշվետվություն, որը կներկայացվի <<Հանրապետական երկրաբանական ֆոնդ>> ՊՈԱԿ հաշվառման և պահպանման:

Ընկերությունն իր պատրաստակամությունն է հայտնում, պարբերաբար հանդիպելու Իջևան համայնքի ղեկավարության հետ, քննարկելու անհրաժեշտ օգնության ծրագրերը և համապատասխան ֆինանսական ներդրումներ կատարել համայնքի բյուջե:

ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄ

Այսպիսով հանքավայրի շահագործման ընթացքում հնարավոր ազդեցությունը շրջակա միջավայրի բոլոր բաղադրիչների վրա թույլատրելի նորմայի սահմաններում է:

Փորձաքննական գործընթացին մասնակցել են ՀՀ բնապահպանության նախարարության ստորաբաժանումները: Փորձաքննական գործընթացում նախագիծը լրամշակվել է և հաշվի են առնվել արված դիտողություններն ու առաջարկությունները:

Օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացվել են հանքային քննարկումներ, որոնց ընթացքում տեղական ինքնակառավարման մարմինները և հասարակայնությունը հավանություն են տվել նախատեսվող գործունեության իրականացմանը:

Փորձաքննական պահանջներ

- Մինչ գործունեության իրականացումն անհրաժեշտ է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ստանալ համապատասխան համաձայնություններ և թույլտվություններ:

- Հանքային ջրի շահագործման աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է պարբերաբար իրականացնել շրջակա միջավայրի բաղադրիչների (ջրերի որակի, քանակի, վիճակի, օդ, հող և այլն) և շահագործման ռեժիմի մոնիթորինգ, կազմել



հետնախագծային վերլուծության ծրագիր, ինչը պետք է հասանելի լինի պետական շահագրգիռ մարմիններին և հասարակայնությանը: Անհրաժեշտության դեպքում նախատեսել շրջակա միջավայրի վրա ազդեցության նվազեցմանն ու բացառմանն ուղղված լրացուցիչ միջոցառումներ:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Դիլիջան» հանքային ջրի գործարան» ՍՊԸ կողմից ներկայացված ՀՀ Տավուշի մարզի Դիլիջանի անխաթթվային հանքային ջրի հանքավայրի թիվ 2/54 (1K) հորատանցքի շահագործման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն, վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

Մասնագետ 



The stamp is circular and contains the following text: 'ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՏՐԱԿԱՅԻՆ ԵՐԿՐԱԿԱՑՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՍՅՈՒՆ' (Commission of Experts of the Republic of Armenia) in Armenian, 'ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ' (Expert Conclusion) in Russian, and 'COMMISSION OF EXPERTS' in English. The center of the stamp contains the number '22243163'.

Զ. Զուռնայան